ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«6» հունիսի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ Մ. Անանյան

ԳԲԽ-60/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի 20.05.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 20.05.2016թ. ներկայացրած բողոքով «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) որպես բողոքի առարկա և պահանջ նշել է՝ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շինանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ

ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունով կայացված որոշումը:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել անգործության ժամկետից հետո կնքվող պայմանագրի որոշումը մինչև «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի բողոքարկման խորհրդի նիստի որոշման կայացումը:

«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընթացակարգի 32-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է հաղթող, իսկ 116-րդ չափաբաժնի մասով՝ 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից: Ընկերությունը ներկայացրել է նախահաշվային գնից 25% ցածր գնային առաջարկը հիմնավորող փաստաթղթեր: Փաստաթղթերը ներկայացնելուց հետո ևս մեկ անգամ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կրկին բանավոր պահանջել է ավելի մանրամասը ներկայացնել ինքնարժեքի հաշվարկը, իսկ ծանուցմամբ տեխնիկական բնութագրում շտկումներ, որ ավելացվի «չորս խցիկ» բառակապակցությունը: «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պահանջվելիք փաստաթղթերը՝ մանրակրկիտ ինքնարժեքի հաշվարկ:

Ընկերությունը ներկայացրել է ԵՏՄ երկրներից ապրանքներ ներմուծող ընկերության գրավոր հավաստումը «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ձեռք բերված հումքի համապատասխանությունը տեխնիկական բնութագրի հետ:

«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն նշել է, որ վերջինս հիմք չի կարող ընդունել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի այն եզրակացությունը, որ Ընկերության կողմից ներկայացված հիմնավորումը արժանահավատ չէ, քանի որ ընկերությունը երկու տարի շարունակ՝ 2014-2015թթ. մատակարարել տվյալ ապրանքը նույն պարամետրերով, նույն տեխնիկական բնութագրով և նույն արժեքով:

Ընկերությունը հայտնել է, որ ինքնարժեքի հաշվարկը տարբերվում է նախորդ հաշվարկից (միավորի արժեքի մասով), քանի որ գնահատող հանձնոժողովի անդամների բանավոր ցուցումով պահանջվել է ներկայացված հաշվարկի մեջ առանձնացնել ԱԱՀ-ն, շահույթը և այլ ծախսերը:

«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն գտնում է, որ վերոգրյալի արդյունքում խախտվել է Կարգի 51-րդ և 52-րդ կետերը և խնդրել է դադարեցնել անգործության ժամկետից հետո կնքվող պայմանագրի որոշումը մինչև «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի բողոքարկման խորհրդի նիստի որոշման կայացումը:

Ընկերության տնօրենը, մասնակցելով 26.05.2016թ. տեղի ունեցած ԳԲԽ-60/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Կենտրոնը 23.05.2016թ. թիվ 02/04.1/1975-16 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությանը խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճեն-ները և տալ կարծիք:

Պատվիրատուն 31.05.2016թ. թիվ ԴՎԱ/1460 Կենտրոնին է ներկայացրել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և միաժամանակ տեղեկացրել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնումների օրենսդրության պահանջների խախտումներ կամ սահմանափակումներ տեղի չեն ունեցել:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը, մասնակցելով 26.05.2016թ. տեղի ունեցած ԳԲԽ-60/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, ներկայացրել է իր առարկությունները «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ:

3. <u>ԳԲԽ-60/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-60/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 32-րդ և 116-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն:

2. «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով նշել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը ամսական /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
32	Դռներ (Դուռ մետաղապլաստե)	6693182	669318	1472500	8835000 (ութ միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար)
116	Պատուհաններ պատուհան մետաղապլաստե	7878788	787879	1733333	10400000 (տասը միլիոն չորս հարյուր հազար)

3. Ընթացակարգի քարտուղար՝ Գ. Թովմասյանը, 08.04.2016թ. ծանուցումամբ հայտնել է, որ «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից համապատասխան չափաբաժիններով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող: Ոստի անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, g.tovmasyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3 կետով նախատեսված փաստաթղթերը: Իսկ այն մասնակիցները, ում առաջարկները համարվել են չհիմնավորված ցածր (ամփոփաթերթում՝ 1-ին և այլ տեղեր զբաղեցնող մասնակիցներ այունյակում, կարմիրով նշվածները), պարտավոր են հրավերի 7.5 կետի 3-րդ ենթակետին համապատասխան այդ չափաբաժինների մասով ներկայացնել նաև գնի հիմնավորումներ:

4. Որպես չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում՝ Ընկերության կողմից 13.04.2016թ. ներկայացվել է նաև հետևյալ տեսքով հաշվարկ.

Մետաղապլաստե Դուռ 2քմ

Շրջանակ-6մ*900 դրամ	5400 դրամ

Փեղկ Դռան-6մ*1300 դրամ	7800 դրամ
Տավր-1մ*1000 դրամ	1000 դրամ
Ներդիր երկաթյա էլեմենտ-12մ*300 դրամ	3600 դրամ
Դռան Բռնակ 1 հատ	1500դրամ
Դռան զամոկ 1 հատ	1200 դրամ
Միջուկ 1 հատ	1000 դրամ
Լամբրի 6մ*380 դրամ	2280 դրամ
Ապակի 1.4քմ *1750 դրամ	2450 դրամ
Շտապիկ 8մ*250 դրամ	2000 դրամ
Այլ ծախս	3000 դրամ
Հարկեր տուրքեր	8000 դրամ
Աշխատավարձ	8000 դրամ

Գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ 1քմ մետաղապլաստե դռան ***ինքնարժեքը կազմում է 23915 դրամ:***

Մետաղապլաստել պատուհան 2քմ

Շրջանակ-5.6մ*900 դրամ	5040 դրամ
Փեղկ Պատուհանի-4.2մ*1050 դրամ	4410 դրամ
Տավր-1.4մ*1000 դրամ	1400 դրամ
Ներդիր երկաթյա էլեմենտ-11.2մ*300 դրամ	3360
Պատուհանի բռնակ 1 հատ	250 դրամ
Պատուհանի զամոկ 1 հատ	1000 դրամ
Ապակեփաթեթ 2քմ*3500 դրամ	7000 դրամ
Շտապիկ 8.4 մ*250 դրամ	2100 դրամ
Այլ ծախս	3000 դրամ
Հարկեր տուրքեր	2000 դրամ
Աշխատավարձ	7000 դրամ

Գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ 1քմ մետղապլաստե պատուհանի ***ինքնարժեքը կազմում է 18280 դրամ:***

5.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. ապրիլի 14-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնոժողովը, հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել թվարկված անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի քարտուղար՝ Գ. Թովմասյանը, ծանուցումամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ և հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

7. Որպես չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում՝ Ընկերության կողմից 25.04.2016թ. ներկայացվել է հետևյալ տեսքով հաշվարկ.

Մետաղապլաստե Դուռ 2քմ

Անվանում	չ/փ	քանակ	գին	Ընդամենը
Շրջանակ-4 խցիկանի, չափերը 60x60 մմ	մ	6	750	4500
Փեղկ Դռան-4 խցիկանի, 120 մմ	մ	6	1083	6498
Տավր	մ	1	830	830
Ներդիր երկաթյա էլեմենտ	մ	12	250	3000
Դռան Բռնակ	հատ	1	1250	1250
Դռան զամոկ	հատ	1	1000	1000
Միջուկ	հատ	1	830	830

Լամբրի	մ	6	1900	11400
Ապակի	քմ	1.4	1456	2038.4
Շտապիկ	մ	8	208	1664
Այլ ծախս				2000
Հարկեր տուրքեր				4611
Աշխատավարձ				5000
Ընդամենը				**44621**
Շահույթ 10%				**4462**
Ընդամենը				**49084**
ԱԱՀ 20%				**9817**
Ընդամենը				**58900**

Գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ 1քմ մետաղապլաստե դռան ***ինքնարժեքը կազմում է 29450 դրամ:***

Մետաղապլաստել պատուհան 2քմ

Անվանումը	չ/փ	քանակ	գին	Ընդամենը
Շրջանակ-4 խցիկանի, չափերը 60x60 մմ	մ	5.6	750	4200
Փեղկ Պատուհանի-4 խցիկանի, չափերը 60x60 մմ	մ	4.2	875	3675
Տավր	մ	1.4	830	1162
Ներդիր երկաթյա էլեմենտ	մ	11.2	250	2800
Պատուհանի բռնակ	հատ	1	208	208
Պատուհանի զամոկ	հատ	1	830	830
Ապակեփաթեթ	քմ	2	2910	5820
Շտապիկ	մ	7.4	208	1539.2

Այլ ծախս				2900
Հարկեր տուրքեր				2700
Աշխատավարձ				5681
Ընդամենը				**31515**
Շահույթ 10%				**3152**
Ընդամենը				**34667**
ԱԱՀ 20%				**6933**
Ընդամենը				**41600**

Գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ 1քմ մետաղապլաստե պատուհանի ***ինքնարժեքը կազմում է 20800 դրամ:***

8. ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎՊ տեղակալ Մ. Խալաթյանի և ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ Ա. Պապյանի կողմից ուսումնասիրվել է «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի 32-րդ և 116-րդ չափաբաժինների մասով ներկայացրած առաջարկները, որի վերաբերյալ տրվել է հետևյալ մասնագիտական եզրակացությունը.

Ընկերությունը 13.04.2016թ. ներկայացրել է ոչ լիարժեք տեխ. բնութագիր՝ ինքնարժեքի հաշվարկով, որը տարբերվում էր գնային առաջարկից: Հանձնաժողովի որոշմամբ առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը:

«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն 25.04.2016թ. ներկայացրել է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին համապատասխան առաջարկ, սակայն այս դեպքում նույնպես ինքնարժեքի հաշվարկը տարբերվել է նախորդ հաշվարկից (նաև միավորի արժեքի մասով) և վերոնշյալի հիման վրա գնահատող հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ դրանք արժանահավատ չեն:

Ուստի պատասխանատու ստորաբաժանման մասնագետները, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը, առաջարկել են մերժել «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի առաջարկը:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. ապրիլի 25-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնոժողովը որոշել է «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի Ընթացակարգի 32-րդ և 116-րդ չափաբաժինների մասով շտկումները՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով մերժել:

4. <u>ԳԲԽ-60/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի 20.05.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.05.2016թ. թիվ ԴՎԱ/1460 գրությունը և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ***<u>ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ</u>, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ:*** Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ***ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է

չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընկերությունը հայտի գնային առաջարկում Ընթացակարգի՝

- 32-րդ չափաբաժնով՝ ***«Դռներ (դուռ մետաղապլաստե)»*** գնման առարկայի 300 քմ համար որպես ինքնարժեք նշել է 6693182 ՀՀ դրամ (այսինքն՝ 1քմ համար ***22 310 ՀՀ դրամ***), մինչդեռ «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն 13.04.2016թ. ներկայացրած գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ 1քմ մետղապլաստե դռան ինքնարժեքը կազմում է ***23 915 ՀՀ դրամ***, իսկ 25.04.2016թ. ներկայացրած գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ 1քմ մետղապլաստե դռան ինքնարժեքը կազմում է ***29 450 ՀՀ դրամ***:
- 116-րդ չափաբաժնով՝ ***«Պատուհաններ պատուհան մետաղապլաստե»*** գնման առարկայի 500 քմ համար որպես ինքնարժեք նշել է 7878788 ՀՀ դրամ (այսինքն՝ 1քմ համար ***15 757 ՀՀ դրամ***), մինչդեռ «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն 13.04.2016թ. ներկայացրած գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ 1քմ մետղապլաստե պատուհանի ինքնարժեքը կազմում է ***18 280 ՀՀ դրամ***, իսկ 25.04.2016թ. ներկայացրած գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ 1քմ մետղապլաստե պատուհանի ինքնարժեքը կազմում է ***20 800 ՀՀ դրամ***:

Պատվիրատուն, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով, ոչ բավարար է համարել հիմնավորումները, քանի որ «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ից Ընթացակարգի 32-րդ և 116-րդ չափաբաժինների մասով պահանջվել է ներկայացնել 75%-ից ցածր գնային առաջարկի հիմնավորում, սակայն «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի թե 13.04.2016թ. և թե 25.042016թ. ներկայացրած գնային առաջարկի հիմնավորումներում ինքնարժեքի հաշվարկները տարբերվել են թե միմյանցից, և թե Ընկերության հայտով ներկայացրած գնային առաջարկից ***(32-րդ չափաբաժնի համար ինքնարժեքը նշվել է 22 310 ՀՀ դրամ, 23 915 ՀՀ դրամ, 29 450 ՀՀ դրամ, իսկ 116-րդ չափաբաժնի համար՝ 15 757 ՀՀ դրամ, 18 280 ՀՀ դրամ, 20 800 ՀՀ դրամ)*** ու վերոնշյալի հիման վրա գնահատող հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ դրանք արժանահավատ չեն և մերժել է «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Նկատի ունենալով, որ Ընթացակարգի 32-րդ և 116-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի 2016թ. ապրիլի 14-ին 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունով կայացված որոշումը համապատասխանում է գնումների մասին ՀՀ

օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի առաջարկում ենք «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի 20.05.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-60/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան